

ԱՊՐԱՆՔԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ



ՍԱՐԳԻՍ ՀՈՎԿԱՆՆԻՍՅԱՆ

ՀԱԱՀ ապրանքագիտության և
մարդեթիմգի ամբիոնի ասպիրանտ

ՄՍԻ ՇՈՒԿԱՅԻ ՆԵՐԿԱ ՎԻՃԱԿԸ ԵՎ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ ՀՀ-ՈՒՄ

Չնայած վերջին տասնամյակում երկրի տնտեսության զարգացմանն ուղղված աշխատանքների իրականացմանը և տեղական արտադրության աշխուժացմանը, հայաստանյան մսի շուկային դեռևս հասուկ են այնպիսի լուրջ խնդիրներ, որոնք կապված են սպառման անբավարարության և տարածքային էական տաստանումների, արտաքին կախվածության սպառնալիքի, ռեսուրսների օգտագործման ցածր մակարդակի, մսի պահանջարկի և առաջարկի անհավասարակշուրջայան, գների կայունության և որակի պահովման, որակի վերահսկողության և զարգացած շուկայական տնտեսության մեխանիզմների ներդրման հիմնահարցերի հետ:

Հետագործության մեջ ներկայացվում է մսի շուկայի բաղադրիչների փոփոխությունն ըստ հիմնական տարրերի՝ մսի պահանջարկի և առաջարկի կառուցվածք, արտադրության կառուցվածքային շարժընթաց, գների շարժ, մսի սպառման մակարդակի և ներգետիկայի փոփոխություններ:

Հիմնաբառեր. մսի շուկա, միս, սմնոյի լիարժեքություն, իմքնարավության մակարդակ, պահանջարկ, առաջարկ, գներ, ներկրում, սպառում

JEL: D24, D49, E31, E39, Q18, Q19

Սննդի օրաբաժնի լիարժեքության ցածր մակարդակը լրջագույն խնդիր է ամբողջ աշխարհում, որը հոյի է մարդու առողջության համար անցանկալի բազմաթիվ հետևանքներով: Անբավարարության խնդիրը առավելապես սուր է արտահայտված կենդանական ծագման բարձրադրման սահմանափակությունից: Հատ անհամաշակ է մսի սպառման տարածքային պատկերը տարբեր տարածաշրջանների ու երկրների առումով՝ պայմանավորված դրանց միջև առկա տնտե-

սական զարգացման անհավասարությամբ: Օրինակ՝ եթե Եվրոպայում 1 շնչի հաշվով սպառվում է միջինը մոտ 80 կգ միս, ապա Աֆրիկայում՝ 4.8 անգամ պակաս կամ 16.7 կգ, ինչը նկատելի է նաև զարգացած և զարգացող երկրների համեմատության պարագայում: Օրինակ՝ ԱՄՆ-ում 2015 թ. 1 շնչի հաշվով սպառվել է մոտ 121, իսկ հարևան Թուրքիայում՝ 36.8 կգ միս կամ 3.2 անգամ պակաս¹: Սպառման անբավարարության խնդիրը բնորոշ է նաև մեր տարածաշրջանին և Հայաստանին, որտեղ մսի և մսամթերքի տարեկան սպառումը 1 շնչի հաշվով ցածր է աշխարհի նույն ցուցանիշից մոտ 1.8 անգամ և կազմում է 23.2 կգ (այսուսկ 3), որը տաստանվում է նաև ըստ մարդերի և Երևան քաղաքի: Այս պարագայում մսով ապահովածության մակարդակի բարձրացումը պահանջում է տեղական արտադրության ավելացում, իրացման համակարգի բարելավում, տեղական շուկաների զարգացման համար նպաստավոր պայմանների ստեղծում: Սակայն անհրաժեշտ է օշեր մսով ապահովածության մակարդակի օպտիմալ գնահատման անհրաժեշտության նասին, քանզի մսի ինքնաբավորթյան ցուցանիշի դիտարկումը թույլ է տալիս ասելու, որ այն անկատար է:

Աղյուսակ 1

Սական պահանջարկի և տեսականու կառուցվածքը <<-ում²

| Սական տարեկան պահանջարկը մեկ շնչի հաշվով | | | | | |
|--|---------------------------------------|------|----------|----|------|
| | 2838 Կկալ/օր նորմայի դեպքում | որից | Ընդամենը | կգ | 75 |
| | | | | % | 100 |
| 1 | 2412 Կկալ/օր նորմայի դեպքում | որից | տավարի | կգ | 32.5 |
| | | | | % | 43.3 |
| | | | խոզի | կգ | 14 |
| | | | | % | 18.6 |
| | | | ոչխարի | կգ | 12 |
| | | | | % | 16 |
| 2 | 2412 Կկալ/օր նորմայի դեպքում | որից | թռչնի | կգ | 12 |
| | | | | % | 16 |
| | | | այլ | կգ | 4.5 |
| | | | | % | 6.0 |
| | | | Ընդամենը | կգ | 36.5 |
| | | | | % | 100 |
| 3 | 2412 Կկալ/օր նորմայի դեպքում | որից | տավարի | կգ | 17.5 |
| | | | | % | 47.2 |
| | | | խոզի | կգ | 10 |
| | | | | % | 27.7 |
| | | | ոչխարի | կգ | 3 |
| | | | | % | 8.3 |
| 4 | 2412 Կկալ/օր նորմայի դեպքում | որից | թռչնի | կգ | 6 |
| | | | | % | 16.6 |
| | | | | | |
| | | | | | |
| | | | | | |
| | | | | | |

¹ Հաշվարկված է FAO Food Outlook BIENNIAL REPORT ON GLOBAL FOOD MARKETS, Trade and Market Division of FAO // Rome, June 2016, էջ 106, և Statistical database of FAO // <http://faostat3.fao.org/home/> Ետվական հիմնային անվտանգության ապահովման և աղքատության նվազեցման հիմնախնդիրների լուծման ուղիները <<-ում, Եր., ՀՊԱՀ, 2011, էջ 115, 166–174:

² Տես ԿԱ. Գրիգորյան, Պարենային անվտանգության ապահովման և աղքատության նվազեցման հիմնախնդիրների լուծման ուղիները <<-ում, Եր., ՀՊԱՀ, 2011, էջ 115, 166–174:

Դա պայմանավորված է այն հանգամանքով, որ բանաձևը, որով հաշվարկվում է մսի ինքնաբավորության ցուցանիշը (կիրառվում է նաև այլ պարենամթերքների ինքնաբավորության աստիճանը հաշվարկելու համար)³, բնութագրում է ազգային ռեսուրսների տեսակարար կշիռը մսի համախառն առաջարկում: Այսպես՝

$$U_{\text{մ}} = \frac{U_{\text{րմ}}}{U_{\text{րմ}} + U_{\text{մ}} - U_{\text{հմ}}} \times 100, \quad (1)$$

որտեղ՝

$U_{\text{րմ}}$ - մսի արտադրություն,

$U_{\text{մ}}$ - մսի ներմուծում,

$U_{\text{հմ}}$ - մսի արտահանում,

$U_{\text{հր}}$ - մսի ինքնաբավորության աստիճան:

Մինչեւ, մեր կարծիքով, դա պետք է արտահայտի երկրի բնակչության պահանջմունքի՝ սեփական ռեսուրսներով ապահովածության աստիճանը: Ընդ որում, պահանջմունքի հաշվարկման հիմքում պետք է լինի մսի սպառման գիտականորեն իհմնավորված ֆիզիոլոգիական նորմը (75 կգ)⁴: Դրան համապատասխան՝ մսի առանձին տեսակների սպառման մակարդակները (աղյուսակ 1), որոնք ապահովում են մարդու առողջ կենսագործունեությունը և զարգացումը, պետք է լինեն ուղենիշ հասարակության և պետության համար: Ինքնաբավորության մակարդակը կարելի է հաշվարկել հետևյալ բանաձևով.

$$U_{\text{մ}} = \frac{U_{\text{րմ}} + \Phi_{\text{մտ}} - U_{\text{հմ}}}{\Phi_{\text{մ}} \times 100}, \quad (2)$$

որտեղ՝

$\Phi_{\text{մտ}}$ - մսի պահուստները տարեսկզբին,

$\Phi_{\text{մ}}$ - մսի պահանջմունքը:

Քանի որ պահուստները և արտահանումը, ըստ տարիների, փոքր են լինում (օրինակ՝ 2014 թ. տավարի, խոցի, թռչնի, ոչխարի և այժի մսի պահուստները կազմել են, համապատասխանբար՝ 0.8, 1.2, 1 և 3.5%, իսկ արտահանումը՝ 0.5, 1.8, 3.2 և 2.3% արտադրության մկատմամբ)⁵, ուստի դրանց ազդեցությունը ինքնաբավորության մակարդակի վրա աննշան է: Սակայն ինքնաբավորության ցուցանիշի հաշվարկը, ըստ (2) բանաձևի, ներկայացված է աղյուսակ 2-ում:

Կարչակարամայականից շուկայական տնտեսությանն անցումը հնարավորություն տվեց ծևավորելու օրենսդրական, իրավական այն դաշտը, որն ապահովեց սեփականատիրության ծևերի, գործարարության զարգացումը հանրապետությունում: Դրա արդյունքը միևնույն արտադրող հարյուրագարավոր տնտեսությունների և մի քանի տասնյակ վերամշակող կազմակերպությունների առկայությունն է (ըստ սեփական ուսումնասիրության):

³ Տես ՀՀ ԱՎԾ, Պարենային ապահովություն և աղքատություն, Եր., 2015 թ. հունվար-սեպտեմբեր, էջ 77:

⁴ Տես ՀՀ Ա. Մամիկոնյան, Սննդարդյունաբերության էկոնոմիկա, Եր., ՀԱԱՀ, 2013, էջ 9:

⁵ Տես ՀՀ ԱՎԾ, Պարենային ապահովություն և աղքատություն, Եր., 2015 թ. հունվար-սեպտեմբեր, էջ 75:

Աղյուսակ 2

Մի պահանջարկի և արտադրության հաշվեկշիռը <<-ում⁶

| N | Ցուցանիշներ | Չափի միավոր | 2005 | 2010 | 2015 | 2015/2005, % |
|---|--|----------------|-------|-------|-------|--------------|
| 1 | Ընդամենը պահանջն ըստ 2838 կկալ/օր նորմայի | հազ. տ | 241.4 | 227.5 | 225.7 | 93.5 |
| | տավարի մսի | հազ. տ | 104.6 | 98.6 | 97.8 | 93.4 |
| | խոզի մսի | հազ. տ | 47.8 | 42.4 | 45.6 | 95.4 |
| | ոչխարի մսի | հազ. տ | 38.6 | 36.4 | 36.1 | 93.5 |
| | թթչնամսի | հազ. տ | 38.6 | 36.4 | 36.1 | 93.5 |
| 2 | Արտադրությունը, ընդամենը | հազ. տ | 56 | 69.5 | 102.8 | 183.5 |
| | տավարի մսի | հազ. տ | 34.4 | 48 | 64.9 | 188.6 |
| | խոզի մսի | հազ. տ | 9.4 | 7.9 | 20.7 | 220.2 |
| | ոչխարի մսի | հազ. տ | 7.6 | 8.2 | 9.2 | 121.0 |
| | թթչնամսի | հազ. տ | 4.6 | 5.4 | 8.5 | 184.7 |
| 3 | Արտահանումը, ընդամենը | հազ. տ | 1.0 | 0.4 | 1.5 | 150.0 |
| | տավարի մսի | հազ. տ | 0.8 | 0.3 | 0.45 | 56.2 |
| | խոզի մսի | հազ. տ | 0.2 | 0.1 | 0.45 | 225 |
| | ոչխարի մսի | հազ. տ | 0 | 0 | 0.3 | - |
| | թթչնամսի | հազ. տ | 0 | 0 | 0.2 | - |
| 4 | Պահուստները, ընդամենը | հազ. տ | 1.0 | 0.8 | 1.1 | 110.0 |
| | տավարի մսի | հազ. տ | 0.5 | 0.4 | 0.5 | 100.0 |
| | խոզի մսի | հազ. տ | 0.2 | 0.1 | 0.2 | 100.0 |
| | ոչխարի մսի | հազ. տ | 0.1 | 0.1 | 0.1 | 100.0 |
| | թթչնամսի | հազ. տ | 0.2 | 0.2 | 0.3 | 150.0 |
| 5 | Սեփական ռեսուրսներով պահպանվածության մակարդակը | % | 23.1 | 30.7 | 45.3 | - |
| | տավարի մսի | % | 33.0 | 48.7 | 66.4 | - |
| | այդ խոզի մսի | % | 19.6 | 18.6 | 44.8 | - |
| | թթում ոչխարի մսի | % | 19.9 | 22.8 | 24.6 | - |
| | թթչնամսի | % | 12.4 | 15.3 | 23.8 | - |

Չնայած այս ամենին, դեռևս զգալի է արտաքին աշխարհից հայաստանյան մսի շուկայի կախվածությունը, որի 37%-ից ավելին ձևավորվում է ներկրումների հաշվին՝ ծախսելով շուրջ 83.6 մլն ԱՄՆ դոլար (բացառությամբ ոչխարի և այծի մսի): ⁷ <<-ն ներկրում է մսի բոլոր տեսակները: Այսպիսի կախվածությունը խոչընդոտ է ստեղծում պարենային անվտանգության ապահովման ձանապարհին, ուստի այդ բարդ խնդրի լուծումը պահանջում է տեղական արտադրողների և պետության ջանքերի միավորում և անասնաբուժության ոլորտի հետևողական զարգացում: Մասնավորապես՝ << գյուղատնտեսության նախարարության կողմից 2007–2015 թթ. իրականացվել է տավարաբուժության զարգացման ծրագիր՝ 19.3 մլրդ դրամ բյուջեով, որի շնորհիվ արտասահմանից << են ներկրվել և գյուղացիական տնտեսություններին տարածամկետ վճարման պայմանով տրամադրվել բարձր մթերատու հոլշտինյան, շվից և սինենթազ ցեղատեսակների կենդանիներ՝ ⁸ Սահմանվել են մատչելի լիզինգային պայմաններ գյուղացիական տնտեսությունների համար՝ նախատեսված քառամյա ժամանակահատվածում լիզինգի ընդհանուր արժեքի

⁶ Կազմված է ըստ << ԱՎԾ, Պարենային ապահովություն և աղբատություն, Եր., 2011 թ. հունվար-սեպտեմբեր, էջ 69, 2006 թ.՝ էջ 68, Հայաստանի Վիճակագրական տարեգիրք, 2010, էջ 24, 2006՝ էջ 25: 2015 թ. տվյալները սեփական հաշվարկների արդյունք են:

⁷ Տես << ԱՎԾ, << արտաքին առևտուրը 2014 թ. (ըստ արտաքին տնտեսական գործունեության ապրանքային անվանացանկի 2-նից դասակարգման), էջ 49:

⁸ Տես << Կառավարության 2007 թ. մարտի 22-ի N 336-Ա որոշումը <<-ում տավարաբուժության զարգացման ծրագիրը հաստատելու և << գյուղատնտեսության նախարարությանը գումար հատկացնելու մասին:

10%, 20%, 30% և 40%-ի չափով մարման նպատակով, համապատասխանաբար՝ I, II, III, IV տարիներիմ⁹: Ծրագրի իրականացումը նպաստել է լրացուցիչ 8 հազ. տոննա մսի արտադրությանը, ինչը տավարի մսի արտադրության 71.5% հավելածում ունեցել է ավելի քան 20% մասնաբաժին: Արդյունքում՝ զյուղատնտեսության համախառն արտադրանքի արժեքի ավելացումը մսի արտադրության հաշվին, յուրաքանչյուր տարվա համար, կազմել է 6 մլրդ դրամ (48 մլրդ դրամ ամբողջ ժամանակահատվածի հաշվով):

Աղյուսակ 3
**Մսի սպառման ինքնարավության և շուկայի կառուցվածքային
 փոփոխությունները ՀՀ-ում¹⁰**

| N | Ցուցանիշներ | Չափի միավոր | 2005 | 2010 | 2015 |
|---|---|----------------|-------|-------|-------|
| 1 | Մսի պահանջարկը, ընդամենը | հազ. տ | 241.4 | 244.6 | 225.7 |
| | Մսի առաջարկը, ընդամենը | հազ. տ | 95.4 | 129.8 | 159.2 |
| 2 | արտադրությունը և որից պահուստները ներկումները | հազ. տ | 57 | 70.3 | 104.3 |
| | Ներկումներից կախվածությունը | % | 41.1 | 46.2 | 37 |
| | տավարի մսի | % | 25 | 15.7 | 12.1 |
| 3 | այդ խոզի մսի թվում թռչնամսի ոչխարի և այծի մսի | % | 43.9 | 60.6 | 45.8 |
| | | % | 81.3 | 87.7 | 80.1 |
| 4 | Մսի էներգետիկան, ընդամենը | մլրդ կյալ | 170.1 | 218.2 | 288 |
| | որից արտադրված մսինը ներկրված մսինը | մլրդ կյալ | 112.8 | 140.2 | 212.7 |
| | ներկրված մսինը | մլրդ կյալ | 57.3 | 78.0 | 75.3 |
| 5 | 1 կգ մսի էներգետիկան, միջինը | կյալ | 1802 | 1691 | 1822 |
| | այդ արտադրված մսինը | կյալ | 2014 | 2017 | 2069 |
| | թվում ներկրված մսինը | կյալ | 1492 | 1311 | 1364 |

Տավարի մսի տեղական արտադրության այսպիսի գարգացումը նպաստել է ներկումներից կախվածության ցուցանիշի կրկնակի անկմանը, և հեռանկարում այն կշարունակի նվազել՝ նկատի առնելով ՀՀ զյուղատնտեսության նախարարության կողմից ոլորտի գարգացման ուղղությամբ իրականացվող աշխատանքների շարունակականությունը՝ տոհնային գործի գարգացման միջոցառումներ (տարեկան մոտ 250 մլն դրամ ֆինանսավորմամբ), խոշոր եղջերավոր անասունների տոհնային և մթերատու հատկանիշների բարելավման միջոցառումների ծրագիր (տարեկան մոտ 650 մլն դրամ ֆինանսավորմամբ), զյուղատնտեսական կենդանիների արհեստական սերմնավորման միջոցառումներ (տարեկան մոտ 150 մլն դրամ ֆինանսավորմամբ), բնական կերահանդակների (արոտավայրերի) օգտագործման վիճակի բարելավման միջոցառումներ (տարեկան մոտ 750 մլն դրամ ֆինանսավորմամբ)¹¹:

Սակայն իրավիճակը հիմնախնդրային է խոզի և հատկապես թռչնամսի շուկայում՝ հաշվի առնելով համապատասխանաբար՝ 45.8 և 80.1% ներկու-


⁹ Տես ՀՀ Կառավարության 2007 թ. նոյեմբերի 1-ի N1289-Ա որոշումը ՀՀ-ում տավարաբուծության զարգացման ծրագրի շրջանակներում ձեռք բերված տոհնային երինչները տարածամկետ վճարման պայմանով հանձնելու մասին:

¹⁰ Կազմված է ըստ ՀՀ ԱՎԾ, Պարենային ապահովություն և աղքատություն, 2011, էջ 69, 2006՝ էջ 68: Կ.Ա. Գրիգորյան, նշվ. աշխ., էջ 173, 2015 թ. թվյաները սեփական հաշվարկների արդյունքներ:

¹¹ Տես ՀՀ զյուղատնտեսության 2015–2025 թթ. կայուն զարգացման ռազմավարության կատարումն ապահովող միջոցառումների ցանկ:

մներից կախվածության ցուցանիշները (աղյուսակ 3): Թեպետ դրանք նվազել են 2010 թ. համեմատությամբ, բայց աղքատության դեռևս բարձր մակարդակի (30%՝ 2014 թ.)¹² և բնակչության ցածր գնողունակության պատճառով մեծ է պահանջարկը ներկրվող մասի նկատմամբ, քանի որ այն էժան է տեղական մասից (խոզինը՝ 30–35%-ով, իսկ թռչնինը՝ 45–50%-ով)¹³, ուստի սպառողի համար որպես այլընտրանք է ծառայում: Սա հանգեցրել է մասի շուկայի կառուցվածքի վատացմանը՝ ցածր էներգետիկ արժեքավորություն ունեցող ներկրվող թռչնի մասի տեսակարար կշռի ավելացման պատճառով, որ արտահայտվում է մասի էներգետիկայի ցուցանիշի անկմանք: Դա պայմանավորում է ներկրվող մասի էներգետիկայի 9.1% նվազումը՝ ի տարբերություն արտադրվածի, որի էներգետիկան աճել է մոտ 1%-ով (աղյուսակ 3): Իր որակական հատկանիշներով նույնաեն ներկրված միաը հետ է մնում տեղականից, և շատ դեպքերում սպառողների վստահության աստիճանը ցածր է դրա ծագման հուսալիության ու որակի նկատմամբ, ըստ այդմ՝ ավելի մեծ է տեղական արտադրության մասի նկատմամբ պահանջարկը¹⁴: Սա պայմանավորում է տեղական արտադրության զարգացման անհրաժեշտությունը, որն իր որակական հատկությունների, սպառողների վստահության առումներով դուրս է մրցակցությունից, իսկ արտադրության արդյունավետության մակարդակի բարձրացման պարագայում կարող է նաև մրցակից լինել ներկրված մասին:

Մսի շուկայի բացասական կառուցվածքային տեղաշարժերին զուգահեռ, սպառողները սկսել են 1.8 անգամ ավելի վճարել սպառվող մասի յուրաքանչյուր 1000 կիլոկալորիայի դիմաց (աղյուսակ 4), որը նաև գնաճի հետևանք է: Մսի շուկայում առավել կայուն է եղել թռչնի մասի գնաճի շարժընթացը, իսկ մասի այլ տեսակների գների հարաշարժությունը տատանողական բնույթ է կրել: Խոզի մասի գների տատանումների վրա մեծապես ազդել են գլխաքանակի աճի և անկման փուլերը: Առավել ակնառու էին 2008 թ. գլխաքանակի 76% անկումը, երբ գներն աճեցին 57%-ով, և 2013 թ. գլխաքանակի 34.2% աճը, որին հաջորդեց 13% գնանկում.



Գծապատկեր 1. Մսի գների շարժընթացը ՀՀ-ում¹⁵

¹²Տես ՀՀ ԱՎԾ, Հայաստանի սոցիալական պատկերը և աղքատությունը, 2015 թ., էջ 38:

¹³Սեփական ուսումնասիրություն:

¹⁴100 սպառողների շրջանում անցկացված սեփական հարցման արդյունք:

¹⁵Կազմված է ըստ ՀՀ ԱՎԾ, Պարենային ապահովություն և աղքատություն, Եր., 2016 թ. հունվար-մարտ, էջ 26, 2010 թ.՝ էջ 28:

Ոչխարի մսի գները կտրուկ աճեցին 2009 թ.՝ շուրջ 57%-ով՝ իրանի հալամական Հանրապետություն ոչխարների մեծաքանակ արտահանման հետևանքով (2009–2010 թթ. զիխաքանակը նվազեց ավելի քան 45 հազարով), սակայն 2012 թ. սկսած՝ ոչխարի մսի գները համեմատաբար կայունացել են, և արձանագրվում է տարեկան միջինը 2.5% անկում:

Աղյուսակ 4

Մսի շուկայի զարգացման ցուցանիշները <<-ում¹⁶

| N | Ցուցանիշներ | Զայիի միավոր | 2005 | 2010 | 2015 |
|---|--|-----------------|-------|-------|-------|
| 1 | Մսի և մսամբերով սպառումը մեկ շնչի հաշվով | կգ | 19.9 | 21.1 | 23.4 |
| | Կենսապահովման նորմայի նկատմամբ | % | 26.5 | 28.1 | 31.2 |
| | նույնը նվազագույն սպառողական զամբյուղի նորմայի նկատմամբ | % | 54.5 | 57.8 | 64.1 |
| 2 | Մեկ շնչի հաշվով մսի տարեկան սպառողական ծախսերը | հազ. դր. | 26.95 | 36.69 | 49.86 |
| | նույնը սպառողական ծախսերի կառուցվածքում պարենի ծախսերի կառուցվածքում | % | 10.6 | 10.6 | 9.8 |
| 3 | Սպառված մսի 1000 կլափի արժեքը | դր. | 1246 | 1806 | 2279 |
| 4 | Շուկայական առաջարկում տեղական արտադր. տեսակարար կշիռը ներկրումների տեսակարար կշիռը | % | 58.7 | 53.5 | 65 |
| | | % | 40.2 | 45.8 | 35 |

Տավարի մսի գների շարժմնացը համեմատաբար կայուն է: Կտրուկ անկում դիտարկվել է միայն 2007 թ.՝ ավելի քան 33%: 2007 թ. և դրան նախորդող տարիների տնտեսական բարձր աճի (2007 թ. երկնիշ տնտեսական աճ արձանագրած վերջին տարին է՝ 13.7%¹⁷), մսի սպառման ծավալների մեծացման (23.4 կգ՝ մեկ շնչի հաշվով¹⁸, որը բարձր է 2014 թ. համապատասխան մակարդակից 0.2 կգ-ով (աղյուսակ 4)) պայմաններում խոզի և տավարի մսի գների տարբերությունը ընդամենը 18% էր, ինչը սպառման մեջ հանգեցրեց տավարի մսի՝ խոզի մսով փոխարինման: Այստեղ դրսերվել է տավարի մսի գնային առաջականությունը (0.64%), քանի որ հեշտությամբ կարող է փոխարինվել խոզի, ոչխարի, թօչնի մսով, ինչպես նաև մսային ենթամթերքներով¹⁹: Դա նկատելի է նաև թվական տվյալների համեմատության պարագայում: 2006 թ. խոզերի գլխաքանակն աճեց ավելի քան 54%-ով՝ 2007 թ. հասնելով 152.7 հազարի (սա հետանկախացման շրջանի ամենաբարձր ցուցանիշն է. խոզի մսի արտադրության աճը կազմեց 50%, իսկ սպառումն ավելացավ ավելի քան 47%-ով²⁰:

¹⁶ Կազմված է ըստ <<ԱՎԾ, Պարենային ապահովություն և աղքատություն, Եր., 2015 թ. հունվար-սեպտեմբեր, էջ 75, 97, 2010 թ.՝ էջ 69, 89, 2006 թ.՝ էջ 69, 88, Հայաստանի վիճակագրական տարեգիր, 2015, էջ 102, 2006՝ էջ 92, 2015 թ. տվյալները սեփական հաշվարկների արդյունք են:

¹⁷ Տե՛ս <<ԱՎԾ, Հայաստանը թվերով, 2009, էջ 19:

¹⁸ Տե՛ս <<ԱՎԾ, Պարենային ապահովություն և աղքատություն, Եր., 2010 թ. հունվար-սեպտեմբեր, էջ 26:

¹⁹ Սերովա Ե.Յ., Արարագա էկոնոմիկա. Սահմանագիր, 1999, էջ 54–56:

²⁰ Տե՛ս <<ԱՎԾ, Պարենային ապահովություն և աղքատություն, Եր., 2008 թ. հունվար-սեպտեմբեր, էջ 59, 69–72:

Ընդհանուր առմամբ, հայաստանյան մսի շուկան ունի աճի մեծ հեռանկարներ, սպառման մակարդակը դեռևս ցածր է՝ 23.2 կգ (առյուսակ 4), որը նույնիսկ չի հատում նվազագույն սպառողական զամբյուղի շեմը: Չնայած հետազոտվող ժամանակահատվածում բնակչության մեկ շնչի հաշվով Եկամուտների եռապատիկ մեծացմանը²¹, մսի սպառումը ավելացել է ընդամենը 16.5%-ով, այսինքն՝ Եկամուտների ավելացումը, այլ հավասար պայմաններում, մեծացրել է մսի սպառումը ընդամենը 0.05%-ով: Սպառման մակարդակի այսպիսի փոփոխությունը է. Ենգելի օրենքի դրսնորումն է, համաձայն որի՝ բնակչության մեկ շնչի հաշվով Եկամուտների ավելացումը հանգեցնում է սննդի վրա կատարվող ծախսերի՝ ավելի փոքր չափով հանաձայնական մեծացման: Այլ կերպ ասած՝ որքան մեծ է ընտանիքի Եկամուտը, այնքան ավելի փոքր Եկամուտի հավելաձի բաժին է ծախսվում սննդամբերքի վրա, ինչն օրինաչափ է ինչպես առանձին վերցրած ընտանիքի, այնպես էլ ամբողջ հասարակության համար: ²² Այս թեզի փաստարկումը կարելի է տեսնել ծախսերի ցուցանիշների համեմատության միջոցով: 2005–2014 թթ. սպառողական ծախսերի 92%-ով մեծացման պարագայում պարենամբերքի վրա կատարվող ծախսերը մեծացել են միայն 55%-ով, իսկ մեկ շնչի հաշվով մսի սպառման ծախսերը նվազել են 0.7 տոկոսային կետով, այն դեպքում, եթե պարենամբերքի ծախսերի կառուցվածքում դրանք աճել են 2.7 տոկոսային կետով: Դրանում իր դերն է ունեցել նաև մսի գների աճը, որի հետևանքով 1 շնչի հաշվով մսի սպառման մակարդակի 1.1 անգամով ավելացման պարագայում մսի սպառողական ծախսերը ավելացել են անհամարժեք՝ 1.8 անգամ: Մսի սպառման մեծացման գործում Եկամուտների ավելացման դերը գնահատելու համար անհրաժեշտ է հաշվի առնել նաև դրանց մակարդակը: 2014 թ. մեկ շնչի հաշվով Եկամուտներն ընդամենը 23%-ով են բարձր եղել աղքատության ընդհանուր գժից: Այս պարագայում Եկամուտի հավելաձն առաջին հերթին ուղղվում է առավել սուր արտահայտված կարիքների բավարարմանը և սննդի էներգետիկայի միավորի հաշվով ավելի ցածր գին ունեցող սննդամբերքներով ընտանիքի ապահովմանը:

Ընդհանրացնելով կարելի է նշել.

- մսի ինքնարբավության հաշվարկման մեթոդաբանությունը պետք է վերանայվի, որը թույլ կտա արդյունավետ գնահատել երկրի՝ սեփական ռեսուրսներով ապահովվածության աստիճանը,
- տեղական մսի որակական բարձր հատկանիշների, ծագման հուսալիության շնորհիվ մեծ է սպառողի վստահությունը և դրա նկատմամբ պահանջարկը, ինչը սեփական արտադրության զարգացման նախադրյալ է,
- մսի շուկան բնութագրում է գների մեծ տատանումներով, և առկա է արտաքին կախվածության սպառնալիք, որն առավել արտահայտված է խոզի և հատկապես թռչնի մսի շուկաներում:

Նշված հիմնախնդիրները պայմանավորում են տեղական արտադրության զարգացման կարևորությունը, որի համար խիստ կարևոր են.

- անասնաբուծության կերային բազայի ամրապնդումը և սեփական կերային ռեսուրսներով ապահովվածության մակարդակի բարձրա-

²¹ Տե՛ս Հայաստանի վիճակագրական տարեգիրք, 2015, էջ 102, 2006՝ էջ 92:

²² Տե՛ս Ծրագիր Ե.Բ., նշվ. աշխ., էջ 57:

ցումը կերային մշակաբույսերի ցանքատարածությունների ընդլայնմամբ,

- արոտավայրերի ջրարբիացումը և բարելավման աշխատանքների իրականացումը,
- տոհմային գործի զարգացումը,
- անասնաբուծության զարգացման միջոցառումների հետևողական իրականացումը,
- համաձարակային հիվանդությունների դեմ պայքարի, կանխարգելիչ միջոցառումների, անասնաբուժական աշխատանքների արդյունավետ կազմակերպումը,
- տեղական շուկաների զարգացումը և մսի իրացման համակարգի կատարելագործումը,
- մսի արտադրության ինտենսիվացման միջոցառումների իրականացումը, որը թույլ կտա բարձրացնել արտադրության արդյունավետության մակարդակը:

Օգտագործված գրականություն

1. «ՀԿ Կառավարության 2007 թ. մարտի 22-ի N 336-Ա որոշումը ՀՀ-ում տավարաբուծության զարգացման ծրագիրը հաստատելու և «ՀՀ գյուղատնտեսության նախարարությանը գումար հատկացնելու մասին»:
2. «ՀՀ Կառավարության 2007 թ. նոյեմբերի 1-ի N1289-Ա որոշումը ՀՀ-ում տավարաբուծության զարգացման ծրագրի շրջանակներում ծեռք բերված տոհմային երինջները տարածամկետ վճարնան պայմանով հանձնելու մասին»:
3. «ՀՀ գյուղատնտեսության 2015-2025 թթ. կայուն զարգացման ռազմավարության կատարումն ապահովող միջոցառումների ցանկ»:
4. Գրիգորյան Կ.Ա., «Պարենային անվտանգության ապահովման և աղքատության նվազեցման հիմնախնդիրների լուծման ուղիները ՀՀ-ում, Եր., ՀՊԱՀ, 2011:
5. «Հայաստանի վիճակագրական տարեգրքեր՝ 2006, 2010, 2015»:
6. «ՀՀ ԱՎԾ, «ՀՀ արտաքին առևտուրը 2014 թ. (ըստ արտաքին տնտեսական գործունեության ապրանքային անվանացանկի 2-նիշ դասակարգման)»:
7. «ՀՀ ԱՎԾ, «Հայաստանի սոցիալական պատկերը և աղքատությունը, 2015 թ.»:
8. «ՀՀ ԱՎԾ, «Հայաստանը թվերով»:
9. «ՀՀ ԱՎԾ, «Պարենային ապահովություն և աղքատություն, Եր., 2006 թ., 2008 թ. հունվար-սեպտեմբեր, 2010 թ. հունվար-սեպտեմբեր, 2011 թ. հունվար-սեպտեմբեր, 2015 թ. հունվար-սեպտեմբեր, 2016 թ. հունվար-մարտ»:
10. Մամիկոնյան Հ.Ս., «Սննդարդյունաբերության էկոնոմիկա, Եր., ՀՍՍՀ, 2013»:
11. Серова Е.В., Аграрная экономика, учебник. М., 1999.
12. FAO Food Outlook BIANNUAL REPORT ON GLOBAL FOOD MARKETS, Trade and Market Division of FAO // Rome, June 2016.
13. Statistical database of FAO // <http://faostat3.fao.org/home/E>

САРГИС ОГАННИСЯН

Аспирант кафедры "Маркетинга и товароведения" АГАУ

Текущая ситуация и проблемы развития рынка мяса в РА. – Несмотря на шаги, которые были предприняты для развития экономики в течение последнего десятилетия и активизацию местного производства, рынок мяса сталкивается с такими серьезными проблемами, которые связаны с вопросами неполного потребления продуктов питания, угрозы внешней зависимости, низкого уровня использования ресурсов, дисбаланса спроса-предложения, обеспечения стабильности цен и качества, внедрения развитых механизмов рыночной экономики и контроля качества.

Исследование представляет изменения компонентов рынка мяса по основным параметрам: структура спроса и предложения мяса, структурная динамика производства, динамика цен, изменение энергетики и потребления мяса.

Ключевые слова: рынок мяса, мясо, полнота пищи, уровень самообеспеченности, предложение, спрос, цены, экспорт, потребление.

JEL: D24, D49, E31, E39, Q18, Q19

SARGIS HOVHANNISYAN

Post-graduate at the Chair of
"Product Science and Marketing" at ANAU

The Current State and Issues of Meat Market Development in the RA. – Despite the steps, which were taken for the development of the economy during the last decade and activation of local production, meat market is specified with such serious problems that are connected with issues of inadequacy of food consumption and significant territorial fluctuations, threat of external dependence, low level of resource usage, imbalance of supply-demand, assurance of price stability and quality, introduction of developed market economy and quality control mechanisms.

The research presents changes in meat market components by its main elements, such us structure of meat supply and demand, structural dynamics of production, changes of meat consumption, energy and prices.

Key words: meat market, meat, plenitude of food, self-sufficiency ratio, demand, supply, prices, export, consumption.

JEL: D24, D49, E31, E39, Q18, Q19